

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա

Ընդհանուր տարածման համար

2014 թ. մայիսի 19

Բնագիրը՝ անգլերեն

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե

Տասնմեկերորդ նստաշրջան

2014թ. մարտի 31- ապրիլի 11

Ընդհանուր մեկնաբանություն թիվ 1 (2014)

Հոդված 12. Հավասարություն օրենքի առջև

I. ներածություն.....	3
II. 12-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությունը	6
Հոդված 12, 1-ին պարբերություն	6
Հոդված 12, 2-րդ պարբերություն	6
Հոդված 12, 3-րդ պարբերություն	8
Հոդված 12, 4-րդ պարբերություն	10
Հոդված 12, 5-րդ պարբերություն	11
III. Մասնակից պետությունների պարտավորությունները.....	11
IV. Փոխկապակցվածությունը Կոնվենցիայի այլ դրույթների հետ	15
Հոդված 5՝ Հավասարություն և խտրականության բացառում	15
Հոդված 6՝ Հաշմանդամություն ունեցող կանայք	17
Հոդված 7՝ հաշմանդամություն ունեցող երեխաները	17
Հոդված 9՝ մատչելիություն	18
Հոդված 13՝ արդարադատության հասանելիություն	18
Հոդվածներ 15 և 25՝ ազատություն, անվտանգություն և համաձայնություն 19	
Հոդվածներ 15, 16 և 17՝ հարգանք անձի անձեռնմխելիության և խոշտանգումից, բռնությունից, շահագործումից և վատ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքների նկատմամբ	20
Հոդված 18՝ ազգություն.....	21
Հոդված 19՝ ապրել անկախ և ներառված լինել համայնքում.....	21
Հոդված 22՝ անձնական կյանք.....	22
Հոդված 29՝ քաղաքական մասնակցություն	22
V. Կիրառումը ներպետական մակարդակում.....	23

I. Ներածություն

1. Օրենքի առջև հավասարությունը մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար ընդհանուր սկզբունքներից է և մարդու իրավունքների իրացման առումով անփոխարինելի: ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը հատուկ երաշխավորում են օրենքի առջև հավասարության իրավունքը: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածը լրացուցիչ նկարագրում է քաղաքացիական այս իրավունքի բովանդակությունը և ուշադրությունը կենտրոնացնում այն ոլորտների վրա, որտեղ հաշմանդամություն ունեցող մարդկանց պատմականորեն մերժվել է այս իրավունքը: 12-րդ հոդվածը հաշմանդամություն ունեցող անձանց համար հավելյալ իրավունքներ չի սահմանում, այն պարզապես նկարագրում է այն մասնավոր բաղադրիչները, որոնք Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավոր են հաշվի առնել, մյուսների հետ հավասար հիմունքներով, հաշմանդամություն ունեցող անձանց՝ օրենքի առջև հավասարության իրավունքի երաշխավորման համար:
2. Հաշվի առնելով այս հոդվածի կարևորությունը՝ Կոմիտեն անձի գործունակության (legal capacity^{1*}) վերաբերյալ ինտերակտիվ քննարկումների հարթակներ է ստեղծել: 12-րդ հոդվածի առնչությամբ փորձագետների, մասնակից պետությունների, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային պայմանագրերի իրականացումը վերահսկող մարմինների, մարդու իրավունքների ազգային մեխանիզմների և ՄԱԿ-ի գործակալությունների միջև տեղի ունեցած խիստ օգտակար մտքերի փոխանակումներից Կոմիտեն ի մի է բերել հարցի հետ կապված ուղեցույց, որը կարևոր է համարել ներկայացնել ընդհանուր մեկնաբանության տեսքով:
3. Մասնակից տարբեր պետությունների նախնական զեկույցների դիտարկման հիման վրա Կոմիտեն նկատում է, որ կա ընդհանուր թյուրըմբռնում Կոնվենցիայի 12-րդ հոդվածի ներքո պետությունների պարտականությունների ճշգրիտ շրջանակի շուրջ: Եվ իսկապես, արձանագրվել է, որ ընդհանուր առմամբ չի հաջողվել ըմբռնել, որ մարդու իրավունքների վրա հիմնված հաշմանդամության մոդելը ենթադրում է հրաժարում անձի փոխարեն որոշումների կայացման մոտեցումից և անցում դեպի աջակցությամբ որոշումների կայացման մոտեցում: Սույն ընդհանուր մեկնաբանության նպատակն է բացահայտել 12-րդ հոդվածի տարբեր բաղադրիչներից բխող պետության ընդհանուր պարտականությունները:

¹ * Legal capacity եզրը թարգմանվել է իբրև «գործունակություն» ելնելով ՀՀ օրենսդրության առանձնահատկությունից: Կարևոր է հաշվի առնել, որ legal capacity եզրը ներառում է ՀՀ օրենսդրության համապատասխան՝ «իրավունակություն» և «գործունակություն» եզրերը համատեղ:

4. Սույն ընդհանուր մեկնաբանությունը իրենից ներկայացնում է 12-րդ հոդվածի մեկնաբանություն՝ հիմնված 3-րդ հոդվածում ամրագրված՝ Կոնվենցիայի ընդհանուր սկզբունքների վրա, մասնավորապես՝ անքակտելի արժանապատվության, անհատական ինքնավարության, ներառյալ՝ սեփական ընտրությունները կատարելու ազատության և անձանց անկախության նկատմամբ հարգանքի, խտրականության բացառման, հասարակությունում լիարժեքորեն և արդյունավետորեն մասնակցության և ներառված լինելու, տարբերությունների նկատմամբ հարգանքի և հաշմանդամություն ունեցող անձանց որպես մարդկային բազմազանության և մարդկության մի մաս ընդունելու, հավասար հնարավորությունների, մատչելիության, տղամարդկանց և կանանց միջև հավասարության, հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող կարողությունների նկատմամբ հարգանքի և նրանց կողմից սեփական ինքնությունը պահպանելու իրավունքի հանդեպ հարգանքի սկզբունքների վրա:
5. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան բոլորն էլ մասնավորում են, որ օրենքի առջև հավասարության իրավունքը կիրառելի է «ամենուր», այլ կերպ ասած՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքում չկան թույլատրելի հանգամանքներ, որոնց պարագայում անձը կարող է զրկվել օրենքի առջև սուբյեկտ ճանաչվելու իրավունքից կամ որոնց պարագայում այս իրավունքը կարող է սահմանափակվել: Այս սկզբունքը կրկնակի է ամրագրվում ՄԱԿ-ի Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում, ըստ որի այս իրավունքը ենթակա չէ սահմանափակման, նույնիսկ արտակարգ իրավիճակի պայմաններում: Թեև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում օրենքի առջև հավասարության իրավունքի սահմանափակման արգելքի համանման սահմանում չկա, սակայն Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի համապատասխան արգելքը կիրառելի է Կոնվենցիայի դեպքում Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 4-րդ պարբերության ուժով, ըստ որի Կոնվենցիայի դրույթները չեն ստորակարգում միջազգային իրավունքի առկա դրույթները:
6. Օրենքի առջև հավասարության իրավունքն արտացոլված է նաև մարդու իրավունքների մասին միջազգային և տարածաշրջանային այլ առանցքային պայմանագրերում: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 15-րդ հոդվածը երաշխավորում է կանանց հավասարությունն օրենքի առջև և պահանջում կանանց գործունակության ճանաչում տղամարդկանց հետ հավասար հիմունքներով, ներառյալ՝ պայմանագրերում որպես կողմ հանդես գալու, գույքի տնօրինման և արդարադատական համակարգում իրավունքների իրացման հարցերի շրջանակում: Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիայի 3-րդ հոդվածում նախատեսվում է յուրաքանչյուր անձի օրենքի առջև հավասարությունը և օրենքի կողմից հավասար պաշտպանված լինելը: Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 3-րդ հոդվածն ամրագրում է

դատավարական իրավասութեկտության (juridical personality) իրավունքը և յուրաքանչյուր անձի իրավունքի ճանաչումը որպես օրենքի առջև հանդես եկող անձ:

7. Մասնակից պետությունները պետք է համապարփակ կերպով ուսումնասիրեն օրենսդրության բոլոր ոլորտները՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը չսահմանափակվի այլոց հետ անհավասար հիմունքներով: Պատմականորեն գործունակության իրավունքը հաշմանդամություն ունեցող անձանց խտրական հիմքերով մերժվել է տարբեր ասպարեզներում՝ նախատեսելով նրանց փոխարեն որոշումների կայացման այնպիսի ռեժիմներ, ինչպիսիք են՝ խնամակալությունը, հանձնակալությունը (conservatorship) և հոգեկան առողջության մասին այնպիսի օրենքները, որոնք թույլատրում են հարկադիր բուժում: Նման պրակտիկաները պետք է վերացվեն, որպեսզի երաշխավորվի հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի վերականգնումը՝ այլոց հետ հավասար հիմունքներով:
8. Կոնվենցիայի 12-րդ հոդվածը հաստատում է, որ հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք ունեն լիարժեք գործունակություն: Նախապաշարումներով պայմանավորված՝ գործունակությունը պատմության ընթացքում մերժվել է տարբեր խմբերի, ներառյալ՝ կանանց (հատկապես ամուսնանալու պահից սկսած) և էթնիկ փոքրամասնություններին: Այդուհանդերձ, հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են մնալ հասարակության այն խումբը, ում գործունակությունը աշխարհի տարբեր երկրների օրենսդիր համակարգերի կողմից ամենաշատն է մերժվում: Օրենքի առջև հավասարության իրավունքը ենթադրում է, որ գործունակությունը համընդհանուր հատկանիշ է, որը բնորոշ է բոլոր անձանց՝ նրանց մարդկային էակ լինելու շնորհիվ, ուստի պետք է իրացվի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից մյուսների հետ հավասար հիմունքներով: Գործունակությունը կենսական է անձի այլ՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացման համար: Հաշմանդամություն ունեցող անձանց համար այն հատուկ նշանակություն է ձեռք բերում, երբ նրանք պետք է առանցքային որոշումներ կայացնեն իրենց առողջության, կրթության և աշխատանքի հարցերի կապակցությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունից զրկելու պրակտիկան բազմաթիվ դեպքերում հանգեցրել է նրանց այլ հիմնարար իրավունքներից զրկելուն, ինչպիսին է քվեարկելու իրավունքը, ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքը, վերարտադրողական իրավունքները, ծնողական իրավունքները, ինտիմ հարաբերություններ ձևավորելուն և բժշկական բուժումներին համաձայնություն տալու իրավունքը, ազատության իրավունքը:
9. Հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք, ներառյալ՝ ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական հաշմանդամություն ունեցողները, կարող են տուժել գործունակությունից զրկելու և անձի փոխարեն որոշումների կայացման ռեժիմներից: Այնուամենայնիվ, անձի փոխարեն որոշումների կայացման և անձի գործունակության մերժման ռեժիմներից անհամաչափ տուժել և մինչ օրս տուժում են մտավոր կամ հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող անձինք: Կոմիտեն

վերահաստատում է, որ անձի կարգավիճակը որպես հաշմանդամություն ունեցող կամ որևէ խեղման առկայությունը (ներառյալ՝ ֆիզիկական կամ զգայական խեղումը) չպետք է երբևէ հիմք հանդիսանա գործունակությունից կամ 12-րդ հոդվածում նշված որևէ իրավունքից զրկելու համար: Բոլոր պրակտիկաները, որոնք խախտում են 12-րդ հոդվածը իրենց նպատակներով կամ առաջ բերած հետևանքներով, պետք է վերացվեն, որպեսզի լիարժեքորեն վերականգնվի հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց գործունակությունը մյուսների հետ հավասար հիմունքներով:

10. Սույն ընդհանուր մեկնաբանության կիզակետում հիմնականում 12-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությունն է և դրանից բխող պետության պարտականությունները: Կոմիտեն կշարունակի այս ոլորտում իր գործունեությունը՝ առաջիկա եզրափակիչ դիտարկումներում, ընդհանուր մեկնաբանություններում և այլ փաստաթղթերում հավելյալ խորքային ուղղորդում տրամադրելով 12-րդ հոդվածից բխող իրավունքների ու պարտականությունների շուրջ:

II. 12-րդ հոդվածի նորմատիվ բովանդակությունը

Հոդված 12, 1-ին պարբերություն

11. 12-րդ հոդվածի 1-ին պարբերությունը վերահաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը ճանաչվելու իբրև օրենքի առջև հանդես եկող անձինք: Սա երաշխավորում է, որ յուրաքանչյուր մարդ էակ արժանանա հարգանքի որպես իրավասություններ ունեցող անձ, ինչը անձի գործունակության ճանաչման նախադրյալն է:

Հոդված 12, 2-րդ պարբերություն

12. 12-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ ճանաչվում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց գործունակությունն իրացնելու իրավունքը կյանքի բոլոր ոլորտներում մյուսների հետ հավասար հիմունքներով: Գործունակությունը ներառում է ունակություն հանդես գալու իբրև ինչպես իրավունքներ կրող, այնպես էլ՝ օրենքի ներքո գործող: Իրավունքների կրող լինելու ունակությունը անձին իր իրավունքները իրավական համակարգում լիարժեքորեն պաշտպանելու իրավունք է տալիս: Օրենքի ներքո գործելու ունակությունը ճանաչում է, որ անձը գործորդ է, որն օժտված է գործարքների մեջ մտնելու, իրավական հարաբերություններ ստեղծելու, փոփոխելու կամ լուծարելու իշխանությամբ: Իրավական գործորդ ճանաչվելու իրավունքը սահմանված է Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 5-րդ պարբերությունում, որում նախատեսված է Մասնակից պետությունների պարտականությունը «ձեռնարկել բոլոր համապատասխան ու արդյունավետ միջոցներն՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքը՝ ունենալու սեփական

գույք և ժառանգելու այն, վերահսկելու իրենց ֆինանսական հարցերը և հավասար հասանելիություն ունենալու բանկային փոխառություններին, հիպոթեկային վարկերին և ֆինանսների փոխառման այլ տեսակներին և ... ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կամայականորեն չզրկվեն իրենց գույքից»:

13. Գործունակությունը և հոգեմտավոր ունակությունը (mental capacity) իրարից զատորոշ հասկացություններ են: Գործունակությունը անձի ունակությունն է կրել իրավունքներ և պարտականություններ (իրավասուբյեկտություն (legal standing)) և գործի դնել այդ իրավունքներն ու պարտականությունները (իրավական գործունակություն (legal agency)): Այն առանցքային նշանակություն ունի հասարակությունում իմաստավոր մասնակցություն դրսևորելու համար: Հոգեմտավոր ունակությունը վերաբերում է անձի՝ որոշումներ կայացնելու հմտություններին, որոնք բնականորեն տարբերվում են անձից անձ և կարող են տարբերվել նույնիսկ նույն անձի մոտ՝ կախված բազմատեսակ գործոններից, ներառյալ՝ միջավայրային և սոցիալական գործոնները: Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերը, ինչպիսիք են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (6-րդ հոդված), ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (15-րդ հոդված), չեն տալիս հոգեմտավոր ունակության և գործունակության տարբերակում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածը, սակայն, հստակեցնում է, որ «անողջախոհությունը» և այլ տեսակի խտրական պիտակները լեգիտիմ պատճառ չեն անձի գործունակությունը մերժելու համար (ինչպես իրավասուբյեկտության, այնպես էլ իրավական գործունակության իմաստով): Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ անձի հոգեմտավոր ունակության իրական կամ ենթադրյալ խնդիրները չեն կարող հիմնավորում հանդիսանալ անձին գործունակությունից զրկելու համար:
14. Գործունակությունը բնածին իրավունք է, որով օժտված են բոլոր մարդիկ, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցողները: Ինչպես նշվեց վերը, այն բաղկացած է երկու ճյուղից. առաջինը իրավունքներ կրելու իրավական կարգավիճակն ու օրենքի առջև իրավասուբյեկտություն ունեցող անձ ճանաչվելն է: Սրա մեջ կարող է մտնել, օրինակ, ծննդյան վկայական կրելը, բուժօգնության դիմելը, ընտրողների ցուցակներում ներառվելը կամ անձնագրի դիմում ներկայացնելը: Երկրորդ ճյուղը իրավական գործունակությունն է՝ գործելու այդ իրավունքների հիման վրա և ունենալու օրենքի կողմից այդ գործողությունների ճանաչում: Այս բաղադրիչն է, որը հաճախ մերժվում կամ սահմանափակվում է հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում: Օրինակ, օրենքով կարող է թույլատրվել, որ հաշմանդամություն ունեցող անձինք սեփականության իրավունքով տիրապետեն գույքի, բայց ոչ միշտ են հարգվում այս մարդկանց գործողությունները՝ կապված գույք գնելու կամ վաճառելու հետ: Գործունակությունը նշանակում է, որ բոլոր մարդիկ, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձինք, ունեն իրավասուբյեկտություն և իրավական գործունակություն (legal agency) պարզապես մարդ էակ լինելու ուժով: Ուստի որպեսզի գործունակության իրավունքն իրացվելի լինի, գործունակության երկու ճյուղերն էլ պետք է ճանաչված լինեն, իսկ դա նշանակում է՝ դրանք տարանջատել

հնարավոր չէ: Հոգեմտավոր ունակության հասկացությունն ինքնին խիստ հակասական է: Այն, ի տարբերություն հաճախ ներկայացված մոտեցման, չի հանդիսանում օբյեկտիվ, գիտական և բնականորեն հանդիպող երևույթ: Հոգեմտավոր ունակությունը կախված է սոցիալական ու քաղաքական համատեքստերից, որոնցից կախված են նաև այն գիտակարգերը, մասնագիտություններն ու մասնագիտական պրակտիկաները, որոնք մարդու հոգեմտավոր ունակությունը գնահատելու հարցում գերակա դեր են խաղում:

15. Մինչ օրս մասնակից պետությունների կողմից Կոմիտեին ներկայացված զեկույցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոգեմտավոր ունակության և գործունակության հասկացություններն այն աստիճանի են իրար սերտաճել, որ այն դեպքերում, երբ համարվում է, թե անձի որոշումներ կայացնելու հմտությունները խեղվել են հիմնականում կոգնիտիվ կամ հոգեսոցիալական հաշմանդամության պատճառով, ապա որոշակի որոշում կայացնելու նրա գործունակությունը օտարվում է նրանից: Գործունակությունից զրկելու որոշումը կայացվում է պարզապես որոշակի խանգարման ախտորոշման հիման վրա (կարգավիճակային մոտեցում) կամ եթե համարվում է, որ անձի կայացրած որոշումները բերում են բացասական հետևանքների կամ համարվում է, որ անձը չունի որոշումներ կայացնելու բավարար հմտություններ (ֆունկցիոնալ մոտեցում): Ֆունկցիոնալ մոտեցումը փորձում է գնահատել անձի հոգեմտավոր կարողությունը և ըստ այդմ էլ մերժվում է նրա գործունակությունը: Այն հաճախ հիմնված է գնահատման վրա, թե արդյոք անձը կարող է ըմբռնել որոշման բնույթը կամ հետևանքները և/կամ արդյոք նա կարող է օգտագործել կամ կշռադատել համապատասխան տեղեկատվությունը: Նման մոտեցումը թերի է հետևյալ երկու գլխավոր պատճառներով՝ ա) այն խտրականորեն է կիրառվում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ և բ) այն հավակնում է ճշգրտորեն գնահատել մարդու մտքի ներքին շարժընթացները: Եթե անձը չի բավարարում ֆունկցիոնալ գնահատման չափանիշները, ապա նա զրկվում է հիմնարար մարդու իրավունքից՝ օրենքի առջև հավասարությունից: Վերը նշված բոլոր մոտեցումներում անձի հաշմանդամությունը և/կամ որոշումներ կայացնելու հմտություններն են ընդունվում որպես լեգիտիմ հիմք նրան գործունակության իրավունքից զրկելու կամ օրենքի առջև սուբյեկտի կարգավիճակը սահմանափակելու համար: 12-րդ հոդվածը չի թույլատրում գործունակության նման խտրական մերժում, փոխարենը այն պահանջում է, որ գործունակության իրացման համար տրամադրվի աջակցություն:

Հոդված 12, 3-րդ պարբերություն

16. 12-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը ճանաչում է մասնակից պետությունների պարտականությունը հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրելու հասանելիություն այնպիսի աջակցություն, որ վերջիններն իրացնեն գործունակության իրենց իրավունքը: Մասնակից պետությունները պետք է ձեռնպահ մնան հաշմանդամություն ունեցող անձանց իրենց գործունակությունից զրկելու

գործողություններից և փոխարենը պետք է նրանց համար հասանելի դարձնեն անհրաժեշտ օժանդակություն, որի շնորհիվ նրանք ի վիճակի կլինեն ընդունել իրավական ուժ ունեցող որոշումներ:

17. Գործունակության իրացման հարցում աջակցությունը պետք է հարգի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, կամքը և նախընտրությունները և երբեք չպետք է հավասարվի անձի փոխարեն որոշումների կայացման: 12-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը չի մասնավորեցնում, թե տվյալ աջակցությունն ինչպիսին պետք է լինի: «Աջակցությունը» լայն եզրույթ է, որը ներառում է ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ լուծումներ, որոնք կարող են լինել տարբեր տեսակի և ինտենսիվության: Օրինակ, հաշմանդամություն ունեցող անձինք կարող են ընտրել իրենց կողմից վստահելի մեկ կամ մի քանի աջակցող անձանց, որոնք կօգնեն իրացնել իրենց գործունակությունը որոշակի որոշումներ կայացնելիս կամ կարող են դիմել այլ տեսակի աջակցության, ինչպիսին օրինակ՝ փոխօգնությունն է, շահերի պաշտպանությունը (ներառյալ հաշմանդամություն ունեցող խմբերի կողմից շահերի պաշտպանության աջակցությունն է) կամ հաղորդակցվելու հարցում օգնությունը: Հաշմանդամություն ունեցող անձանց իրենց գործունակությունն իրացնելու հարցում աջակցությունը կարող է ներառել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են օրինակ՝ համընդհանուր դիզայնի (universal design) ու մատչելիության ապահովումը, որը պետք է իրականացվի ինչպես մասնավոր, այնպես էլ՝ հանրային դերակատարների կողմից՝ բանկեր և ֆինանսական հաստատություններ, տեղեկատվության տրամադրումն ըմբռնելի ձևաչափերով կամ ժեստերի պրոֆեսիոնալ թարգմանիչների միջոցով, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք իրենց իրավաբանական գործողություններն իրականացնեն, օրինակ՝ բացեն բանկային հաշիվներ, ստորագրեն պայմանագրեր կամ իրականացնել քաղաքացիական այլ գործարքներ: Աջակցությունը կարող է նաև բաղկացած լինել հաղորդակցության բազմազան, ոչ ավանդական մեթոդների մշակումից և ճանաչումից՝ հատկապես այն անձանց համար, ովքեր իրենց կամքը և նախընտրություններն արտահայտելու համար կիրառում են հաղորդակցության ոչ խոսքային եղանակներ: Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ անձանց համար նախապես պլանավորելու հնարավորությունն աջակցության կարևոր ձև է, այսինքն՝ անձը կարող է իր կամքն ու նախասիրություններն արտահայտել նախապես, և երբ նա այնպիսի վիճակում լինի, որ ի վիճակի չի լինի հաղորդել իր ցանկություններն ուրիշներին, կյանքի կկոչվեն իր կամքն ու նախասիրությունները: Հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք ունեն նախնական պլանավորման գործընթացներում ներգրավվելու իրավունք, և նրանց այդ հնարավորությունը պետք է ընձեռնվի մյուսների հետ հավասար հիմունքներով: Մասնակից պետությունները կարող են նախապես պլանավորելու զանազան նախընտրություններին համապատասխանող տարբեր մեխանիզմներ առաջարկել, սակայն առաջարկվելիք բոլոր տարբերակները պետք է զերծ լինեն խտրականությունից: Ցանկության դեպքում աջակցություն պետք է տրվի անձանց նախապես պլանավորելու գործընթացն ավարտին հասցնելու նպատակով: Անձի՝ նախապես մշակված կամքի գործադրման (և դրա ուժը կորցնելու) պահը նախանշում է հենց ինքը անձը: Այն պետք է ներառվի

իր կամքի գործադրման հրահանգում և չպետք է հիմնված լինի այնպիսի գնահատականի վրա, թե անձը չունի հոգեմտավոր ունակություն:

18. Տրամադրվելիք աջակցության ձևն ու ինտենսիվությունը մեծապես կտարբերվի անձից անձ՝ պայմանավորված հաշմանդամություն ունեցող անձանց բազմազանությամբ: Սա համահունչ է 3-րդ հոդվածի (դ) կետին, ըստ որի «տարբերությունների նկատմամբ հարգանքը և հաշմանդամություն ունեցող անձանց ընդունումը որպես մարդկային բազմազանության ու մարդկության մի մաս» Կոնվենցիայի ընդհանուր սկզբունքներից է: Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից որոշումներ ընդունելու ինքնավարությունը և ունակությունը պետք է հարգվի բոլոր իրավիճակներում, ներառյալ՝ ճգնաժամային:
19. Հաշմանդամություն ունեցող որոշ անձինք կարող են այլոց հետ հավասար հիմունքներով գործունակության իրենց իրավունքի ճանաչում պահանջել, ինչպես նախատեսված է Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, սակայն կարող են ցանկություն չունենալ իրացնելու աջակցություն ստանալու իրենց իրավունքը, ինչպես նախատեսված է 12-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ:

Հոդված 12, 4-րդ պարբերություն

20. 12-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը սահմանում է այն երաշխիքները, որոնք պետք է առկա լինեն գործունակության իրացման հարցում աջակցություն տրամադրող համակարգում: Ըստ այդմ, 4-րդ պարբերությունը պետք է ընթերցվի ողջ 12-րդ հոդվածի և Կոնվենցիայի համակցությամբ: Այն պահանջում է, որ մասնակից պետությունները ստեղծեն համարժեք և արդյունավետ երաշխիքներ գործունակության իրացման համար: Նման երաշխիքների առաջնային նպատակը պետք է լինի ապահովել հարգանք անձի իրավունքների, կամքի ու նախընտրությունների հանդեպ: Այս նպատակին հասնելու համար երաշխիքները այլոց հետ հավասար հիմունքներով պետք է պաշտպանված լինեն չարաշահումներից:
21. Այն դեպքերում, երբ նշանակալի ջանքեր արդեն իսկ գործադրվել են, սակայն գործնականորեն հնարավոր չէ բացահայտել անձի կամքը ու նախընտրությունները, անձի «լավագույն շահ» սահմանմանը պետք է փոխարինի անձի «կամքի և նախընտրությունների լավագույն մեկնաբանություն» արտահայտությունը: Այս կերպ կապահովվի նրա իրավունքների, կամքի ու նախընտրությունների նկատմամբ հարգանքը՝ բավարարելով 12-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջը: «Լավագույն շահի» սկզբունքն ինքնին երաշխիք չէ, որ այն համապատասխանում է 12-րդ հոդվածին չափահաս անձանց համատեքստում: «Կամքի և նախընտրությունների» պարադիգմը պետք է փոխարինի «լավագույն շահ» պարադիգմին, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց գործունակության իրավունքի իրացումն այլոց հետ հավասար հիմունքներով:

22. Բոլոր մարդկանց էլ սպառնում է «անհարկի ազդեցության» ներքո հայտնվելու վտանգը, սակայն այդ սպառնալիքը սրվում է հատկապես այն մարդկանց դեպքում, ովքեր սեփական որոշումները կայացնելու հարցում ապավինում են այլոց աջակցությանը: Անհարկի ազդեցությունը սահմանվում է այնպիսի հատկանիշների առկայությամբ, երբ աջակցողի և աջակցությունը ստացողի միջև հարաբերության որակը բնութագրվում է վախի, ագրեսիայի, սպառնալիքի, խաբեության կամ մանիպուլյացիայի նշաններով: Գործունակության իրացման երաշխիքները պետք է ներառեն անհարկի ազդեցությունից պաշտպանություն, ընդ որում՝ այդ պաշտպանությունն էլ պետք է հարգի տվյալ անձի իրավունքները, կամքը և նախընտրությունները, ներառյալ՝ ռիսկի դիմելու և սխալ գործելու իրավունքը:

Հոդված 12, 5-րդ պարբերություն

23. 12-րդ հոդվածի 5-րդ պարբերությամբ մասնակից պետություններից պահանջվում է ձեռնարկել միջոցներ, ներառյալ՝ օրենսդրական, վարչարարական, դատական և այլ գործնական միջոցներ, որպեսզի այլոց հետ հավասար հիմունքներով ապահովվեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ կապված ֆինանսական և տնտեսական հարցերի հետ: Հաշմանդամություն ունեցող անձանց ավանդաբար մերժվել է ֆինանսների և գույքի հասանելիությունը՝ հիմնվելով հաշմանդամության բժշկական մոդելի վրա: Հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը ֆինանսական հարցերում մերժող այդ մոտեցմանը պետք է փոխարինի գործունակությունն իրացնելու հարցում աջակցությունը՝ ըստ 12-րդ հոդվածի 3-րդ պարբերության: Այնպես, ինչպես սեռը չի կարող օգտագործվել որպես խտրականության հիմք ֆինանսների ու գույքի հարցերում,^[1] նույն կերպ հաշմանդամությունը չի կարող լինել նման հիմք:

III. Մասնակից պետությունների պարտավորությունները

24. Մասնակից պետությունները կրում են հաշմանդամություն ունեցող անձանց՝ օրենքի առջև հավասար լինելու իրավունքը հարգելու, պաշտպանելու և իրացնելու պարտավորությունը: Այս առումով մասնակից պետությունները պետք է ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որով հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են օրենքի առջև հավասարության իրավունքից: Մասնակից պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ միտված ոչ պետական դերակատարների և մասնավոր անձանց կողմից միջամտությունների կանխմանը, որոնցով նրանք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձանց իրացնելու վայելելի մարդու իրավունքները, ներառյալ՝ գործունակության իրավունքը: Այս իրավունքի իրացման հարցում օժանդակություն տրամադրելու նպատակներից մեկը

հաշմանդամություն ունեցող անձանց ինքնավստահությունն ու հմտությունները զարգացնելն է, որպեսզի նրանք ի վիճակի լինեն ժամանակի ընթացքում և ըստ ցանկության իրենց գործունակությունն իրացնել պակաս աջակցությամբ: Մասնակից պետությունները կրում են աջակցություն ստացող անձանց վերապատրաստելու պարտականությունը, որպեսզի նրանք ի վիճակի լինեն որոշել, թե որ պահին ավելի պակաս աջակցության կարիք կունենան իրենց գործունակությունն իրացնելու հարցում կամ ընդհանրապես այլևս չեն ունենա:

25. «Համընդհանուր գործունակությունը» լիարժեքորեն ճանաչելու նպատակով, որը նշանակում է, որ բոլոր անձինք՝ անկախ հաշմանդամությունից և որոշումներ կայացնելու հմտություններից, օժտված են գործունակությամբ, մասնակից պետությունները պետք է վերացնեն գործունակությունից զրկելու պրակտիկաները, որոնք խտրական են և իրենց նպատակով կամ հետևանքներով հիմնված են հաշմանդամության վրա:[2]
26. Մասնակից պետությունների նախնական զեկույցների մասին եզրափակիչ դիտարկումներում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեն 12-րդ հոդվածի առնչությամբ հետևողականորեն կրկնել է, որ մասնակից պետությունները պետք է «վերանայեն խնամակալություն ու հոգաբարձություն թույլ տվող իրենց օրենքները և գործողություններ ձեռնարկեն այնպիսի օրենքներ ու քաղաքականություններ մշակելու ուղղությամբ, անձի փոխարեն որոշում կայացնելու ռեժիմը փոխարինվի աջակցությամբ որոշումներ կայացնելու ռեժիմով, որը կհարգի անձի ինքնավարությունը, կամքը և նախընտրությունները»:
27. Անձի փոխարեն որոշումներ կայացնելու ռեժիմներն ունեն տարբեր ձևաչափեր, ներառյալ՝ ամբողջական խնամակալություն, դատական արգելանք և մասնակի խնամակալություն: Սակայն այս ռեժիմներին բնորոշ է ընդհանուր մի քանի հատկանիշ՝ դրանք սահմանվում են որպես համակարգեր, որոնցում՝ ա) անձը զրկվում է գործունակությունից, նույնիսկ եթե խոսքը մեկ որոշում կայացնելու իրավունքի մասին է, բ) անձի փոխարեն որոշում ընդունողը նշանակվում է մեկի կողմից, որը տվյալ անձը չէ և դա կարող է արվել նրա կամքին հակառակ, գ) անձի փոխարեն որոշումներ ընդունողի ցանկացած որոշում հիմնված է տվյալ անձի այսպես կոչված՝ օբյեկտիվ «լավագույն շահի» վրա՝ փոխանակ հիմնված լինելու անձի կամքի և նախընտրությունների վրա:
28. Մասնակից պետությունների պարտականությունը՝ փոխարինելու անձի փոխարեն որոշումներ կայացնելու ռեժիմները անձին որոշումների կայացման աջակցությամբ պահանջում են ինչպես անձի փոխարեն որոշումներ կայացնելու ռեժիմների վերացում, այնպես էլ որոշումներ կայացնելու հարցում նրան առաջարկվելիք այլընտրանքների մշակում: Աջակցությամբ որոշումների կայացման համակարգերի մշակման զուգորդումը առկա ռեժիմներով, երբ անձի փոխարեն են կայացնում որոշումներ, դեռևս բավարար չէ Կոնվենցիայի 12-րդ հոդվածին համապատասխանությունն ապահովելու համար:

29. Աջակցությամբ որոշումների կայացման ռեժիմը պետք է ապահովի բոլոր իրավունքների պաշտպանությունը, ներառյալ այն իրավունքների, որոնք առնչվում են անձի ինքնավարությանը (գործունակության իրավունք, օրենքի առջև հավասարության իրավունք, բնակության տեղն ընտրելու իրավունք և այլն) և բռնությունից ու վատ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքներին (կյանքի իրավունք, ֆիզիկական անձեռնմխելիության իրավունք և այլն): Ավելին, աջակցությամբ որոշումների կայացման համակարգերը չպետք է միտված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց կյանքն անհարկի կարգավորելուն: Թեև աջակցությամբ որոշումների կայացման ռեժիմները կարող են տարբեր ձևաչափերի լինել, դրանք բոլորը պետք է պարունակեն առանցքային դրույթներ, որոնցով ապահովվում է դրանց համապատասխանությունը Կոնվենցիայի 12-րդ հոդվածին, ներառյալ հետևյալ դրույթները՝

- (ա) Որոշումների կայացման աջակցությունը պետք է հասանելի լինի բոլորին: Աջակցություն ստանալու կարիքի մակարդակը, հատկապես եթե այն արդեն իսկ բարձր է, չպետք է խոչընդոտի որոշումներ կայացնելու հարցում աջակցություն ստանալուն:
- (բ) Գործունակությունն իրացնելու աջակցության բոլոր ձևերը, ներառյալ առավել ինտենսիվ աջակցությունը, պետք է հիմնված լինեն անձի կամքի ու նախընտրության վրա, այլ ոչ թե ենթադրյալ ընկալման, թե որոնք են նրա օբյեկտիվ լավագույն շահերը:
- (գ) Անձի հաղորդակցվելու ձևը չպետք է խոչընդոտի որոշումներ կայացնելու հարցում աջակցություն ստանալուն, նույնիսկ եթե այդ հաղորդակցությունը ոչ ավանդական է կամ հասկանալի միայն քիչ մարդկանց:
- (դ) Պետք է առկա և հասանելի լինի անձի կողմից պաշտոնապես ընտրված աջակցող անձի/անձանց իրավական ճանաչումը, ընդ որում մասնակից պետությունները պարտավոր են դյուրինացնել աջակցության ստեղծումն հատկապես այնպիսի անձանց համար, որոնք մեկուսացված են կամ ում հասանելի չէ համայնքներում բնականորեն ստեղծվող աջակցությունը: Այս պարտականության կատարումը ենթադրում է այնպիսի մեխանիզմի ստեղծում, որով երրորդ կողմերը կարող են ստուգաճշտել աջակցող անձի ինքնությունը, ինչպես նաև այնպիսի մեխանիզմի առկայություն, որի հիման վրա երրորդ կողմերը կարող են վիճարկել աջակցող անձի գործողությունը, եթե համարում են, որ նա չի գործում տվյալ անձի կամքի ու նախընտրությունների համաձայն:
- (ե) Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված պահանջը բավարարելու նպատակով մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ աջակցությունը «հասանելի դարձնելու» միջոցառումներ, նրանք պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար աջակցությունը հասանելի լինի զուտ խորհրդանշական գնով կամ անվճար և որ ֆինանսական

միջոցների բացակայությունը նրանց համար խոչընդոտ չհանդիսանա իրենց գործունակությունն իրացնելու հարցում աջակցություն ստանալու համար:

- (գ) Որոշումների կայացման հարցում աջակցությունը չպետք է օգտագործվի որպես արդարացում հաշմանդամություն ունեցող անձանց այլ հիմնարար իրավունքների սահմանափակման համար, հատկապես այնպիսի իրավունքների, ինչպիսիք են՝ քվեարկելու իրավունքը, ամուսնանալու իրավունքը, քաղաքացիական միություն ստեղծելու իրավունքը, ընտանիք ստեղծու, վերարտադրողական, ծնողական իրավունքները, ինտիմ հարաբերությունների և բժշկական բուժման հարցերում համաձայնություն տալու իրավունքը և ազատության իրավունքը:
- (ե) Անձը պետք է ունենա ցանկացած պահի աջակցությունից հրաժարվելու, այն դադարեցնելու, աջակցողի հետ հարաբերությունները փոխելու իրավունքը:
- (ը) Գործունակության ու այն իրացնելու հարցում աջակցության բոլոր գործընթացների առնչությամբ պետք է ստեղծվեն երաշխիքներ, որոնց նպատակը պետք է լինի ապահովել, որ անձի կամքն ու նախընտրությունները հարգվեն:
- (թ) Գործունակությունն իրացնելու աջակցության տրամադրումը չպետք է բացառապես հիմնված լինի հոգեմտավոր կարողության գնահատականների վրա: Անհրաժեշտ է մշակել աջակցության կարիքների նոր, անխտրական ցուցանիշներ, երբ նախատեսվում է գործունակության իրացման աջակցության տրամադրում:
30. Օրենքի առջև հավասարության իրավունքը ճանաչված է որպես քաղաքացիական և քաղաքական իրավունք, որն ամրագրված է ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում: Քաղաքացիական և քաղաքական իրավունքները գործի են դրվում դաշնագրի վավերացման պահից սկսված, ուստի մասնակից պետություններից պահանջվում է քայլեր ձեռնարկել դրանք անմիջապես կյանքի կոչելու համար: Որպես այդպիսիք, 12-րդ հոդվածով սահմանված իրավունքները կիրարկելի են Կոնվենցիայի վավերացման պահից սկսած և ենթակա են անմիջապես կյանքի կոչման: Պետության պարտականությունը, որը սահմանված է 12-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ, այն է՝ գործունակության իրացման հարցում ապահովել աջակցության տրամադրում, պարտադիր կատարման ենթակա պահանջ է օրենքի առջև հավասարության իրավունքի՝ որպես քաղաքացիական և քաղաքական իրավունքի կյանքի կոչման համար: «Պրոգրեսիվ իրականացումը» (4-րդ հոդվածի 2-րդ պարբերություն) կիրառելի չէ 12-րդ հոդվածի դրույթների նկատմամբ: Կոնվենցիան վավերացնելիս մասնակից պետությունները պետք է անմիջապես սկսեն քայլեր ձեռնարկել 12-րդ հոդվածով սահմանված իրավունքների իրականացման ուղղությամբ: Այդ քայլերը պետք է լինեն կշռադատված, լավ պլանավորված և մշակված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպությունների հետ խորհրդակցությամբ և նրանց իմաստալից մասնակցությամբ:

IV. Փոխկապակցվածությունը Կոնվենցիայի այլ դրույթների հետ

31. Անձի գործունակության ճանաչումն անքակտելիորեն կապված է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով նախատեսված բազմաթիվ այլ իրավունքների իրացման հետ, այդ թվում, սակայն չսահմանափակվելով դրանցով՝ արդարադատության հասանելիության իրավունքի (13-րդ հոդված), հոգեբուժական հաստատությունում իր կամքին հակառակ ազատագրված չլինելու և հարկադրաբար հոգեբուժական բուժման չենթարկվելու իրավունքի (14-րդ հոդված), ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի (17-րդ հոդված), ազատ տեղաշարժի և ազգության իրավունքի (18-րդ հոդված), բնակվելու տեղը և իր հետ ապրող անձանց ընտրելու իրավունքի (19-րդ հոդված), ազատ արտահայտման իրավունքի (21-րդ հոդված), ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունքի (23-րդ հոդված), բժշկական բուժմանը համաձայնություն տալու իրավունքի (25-րդ հոդված), քվեարկելու և ընտրություններին մասնակցելու իրավունքի (29-րդ հոդված) հետ: Առանց ճանաչվելու իբրև օրենքի առջև անձ՝ այս իրավունքները, ինչպես նաև Կոնվենցիայով սահմանված բազմաթիվ այլ իրավունքներ վերահաստատելու, դրանք իրացնելու ու կիրարկելու կարողությունը զգալիորեն դժվարանում է:

Հոդված 5՝ Հավասարություն և խտրականության բացառում

32. Որպեսզի ապահովվի օրենքի առջև հավասարությունը, անձին չի կարելի խտրականորեն զրկել գործունակությունից: Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է բոլոր անձանց հավասարությունն օրենքի ներքո և առջև, ինչպես նաև օրենքի կողմից հավասար պաշտպանությունը: Կոնվենցիան հստակ արգելում է անձի հաշմանդամությամբ պայմանավորված խտրականության բոլոր դրսևորումները: Հաշմանդամության հիմքով խտրականությունը սահմանված է Կոնվենցիայի 2-րդ հոդվածում որպես «հաշմանդամության հիմքով ցանկացած տեսակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակն է անձի բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների՝ այլոց հետ հավասար հիմունքներով ճանաչումը, վայելումն ու իրացումը խոչընդոտելը կամ վերացնելը կամ այդ հետևանքներն առաջացնելը»: Գործունակության մերժումը ունի հաշմանդամություն ունեցող անձանց՝ օրենքի առջև հավասարության իրավունքի միջամտության նպատակ կամ հանգեցնում է դրան, ուստի այն Կոնվենցիայի 5-րդ և 12-րդ հոդվածների խախտում է: Պետություններն ունեն անձի գործունակության սահմանափակման հնարավորություն՝ պայմանավորված որոշակի հանգամանքներով, ինչպիսիք են՝ անձի սնանկությունը կամ քրեական պատասխանատվություն կրելը: Մինչդեռ օրենքի առջև հավասարության իրավունքը և խտրականությունից զերծ լինելը պետությունից պահանջում են, որպեսզի անձին գործունակությունից զրկելն իրականացվի մյուսների հետ հավասար հիմունքներով: Անձի գործունակության մերժումը չպետք է հիմնված լինի անձնական հատկանիշի վրա, ինչպիսիք են սեռը, ռասան, հաշմանդամությունը, և չպետք է հետապնդի անձի

նկատմամբ տարբերակված վերաբերմունք դրսևորելու նպատակ կամ հանգեցնի դրան:

33. Խտրականությունից զերծ լինելու ազատությունը գործունակության իրավունքի ճանաչման համատեքստում վերականգնում է անձի ինքնավարությունն ու հարգում է նրա արժանապատվությունը՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանված սկզբունքներին համաձայն: Սեփական ընտրությունը կատարելու ազատությունը առավել հաճախ պահանջում է գործունակության առկայություն: Անձի անկախությունն ու ինքնավարությունը ներառում է իրավագործություն արժանանալու սեփական որոշումների նկատմամբ իրավական հարգանքի: Աջակցությունն ու խելամիտ հարմարեցումների կարիքը որոշումների կայացման հարցում չպետք է հիմնավորում դառնան անձի գործունակությունը հարցականի տակ դնելու համար: Տարբերությունների նկատմամբ հարգանքը և հաշմանդամություն ունեցող անձանց որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը (3-րդ հոդված, կետ (դ)) անհամատեղելի է գործունակության օժտման այնպիսի հիմունքների հետ, որոնք նպատակով ասիմիլացնող են:
34. Խտրականության բացառումը ներառում է գործունակության իրացման հարցում խելամիտ հարմարեցումների իրավունք (5-րդ հոդված, 3-րդ պարբերություն): Խելամիտ հարմարեցումը սահմանված է Կոնվենցիայի 2-րդ հոդվածում որպես «կոնկրետ իրավիճակներում կարիքի դեպքում անհամաչափ կամ անհարկի բեռ չպատճառող անհրաժեշտ և համապատասխան փոփոխումների և հարմարեցումների իրականացում, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքների և հիմնարար ազատությունների իրացումը կամ վայելումը այլոց հետ հավասար հիմունքներով»: Խելամիտ հարմարեցման իրավունքը գործունակության իրացման համատեքստում անջատ է գործունակության իրացման հարցում աջակցության իրավունքից և լրացնում է դրան: Մասնակից պետություններից պահանջվում է իրականացնել բոլոր անհրաժեշտ փոփոխումները կամ հարմարեցումները, որոնք թույլ կտան հաշմանդամություն ունեցող անձանց իրացնել գործունակության իրենց իրավունքը, բացառությամբ եթե դրանք անհամաչափ կամ անհարկի բեռ են: Նման փոփոխումները կամ հարմարեցումները կարող են իրենցից ներկայացնել հետևյալը, սակայն չսահմանափակվել դրանցով՝ կարևոր նշանակության շենքերի մատչելիություն, ինչպիսիք են դատարանները, բանկերը, սոցիալական աջակցության գրասենյակները, ընտրատեղամասերը, իրավաբանական ուժ ունեցող որոշումների մասին տեղեկատվության մատչելիություն և անձնական օգնականի ծառայություն: Գործունակության իրացման հարցում աջակցության իրավունքը չպետք է սահմանափակվի անհամաչափ կամ անհարկի բեռ լինելու հիմնավորմամբ: Պետությունը կրում է բացարձակ պարտավորություն՝ ապահովելու գործունակության իրացման աջակցության հասանելիությունը:

Հոդված 6՝ Հաշմանդամություն ունեցող կանայք

35. Կանանց նկատմամբ խտրականություն բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի 25-րդ հոդվածով սահմանված է կանանց գործունակությունը տղամարդկանց հետ հավասար հիմունքներով: Ընդ որում՝ ընդունելով, որ գործունակության ճանաչումը օրենքի առջև հավասարության անբաժանելի մասն է՝ «մասնակից պետությունները պետք է քաղաքացիական հարցերում կանանց օժտեն գործունակությամբ ճիշտ այնպես, ինչպես տղամարդկանց, և գործունակությունն իրացնելու նույն հնարավորություններով: Մասնավորապես, պետությունները կանանց տալիս են հավասար իրավունքներ կնքելու պայմանագրեր և տնօրինելու գույք և արժանացնում են հավասար վերաբերմունքի դատական և տրիբունալային ընթացակարգերի բոլոր փուլերում» (2-րդ պարբերություն): Այդ դրույթը վերաբերելի է բոլոր կանանց, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցողներին: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան ճանաչում է, որ հաշմանդամություն ունեցող կանայք կարող են ենթարկվել բազմակի և փոխհաստվող խտրականության ձևերի՝ պայմանավորված իրենց սեռով և հաշմանդամությամբ: Օրինակ, հաշմանդամություն ունեցող կանանց հարկադիր ստերջացման ենթարկելու մակարդակը բարձր է, նրանց հաճախ մերժվում է իրենց վերարտադրողական առողջության նկատմամբ վերահսկությունը և որոշումների կայացումը այն ենթադրությամբ, թե իբր նրանք ի վիճակի չեն համաձայնություն տալ սեռական հարաբերությանը: Որոշ իրավահամակարգերում կանանց նկատմամբ անձի փոխարեն որոշումների կայացման համակարգի կիրառման ցուցանիշն առավել բարձր է, քան տղամարդկանց նկատմամբ: Ուստի, հատկապես այս համատեքստում կարևոր է վերահաստատել, որ հաշմանդամություն ունեցող կանանց գործունակությունը պետք է ճանաչվի մյուսների հետ հավասար հիմունքներով:

Հոդված 7՝ հաշմանդամություն ունեցող երեխաները

36. Թեև Կոնվենցիայի 12-րդ հոդվածը պաշտպանում է օրենքի առջև հավասարությունը բոլոր անձանց դեպքում՝ անկախ տարիքից, Կոնվենցիայի 7-րդ հոդվածը ճանաչում է երեխաների զարգացող ունակությունները և պահանջում, որ «հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում... երեխայի լավագույն շահը լինի առաջնային նկատառում» (2-րդ պարբերություն) և որ «նրանց տեսակետներին տրվի համարժեք կշիռ՝ ըստ նրանց տարիքի ու հասունության» (3րդ պարբերություն): 12-րդ հոդվածը բավարարելու համար մասնակից պետությունները պետք է ուսումնասիրեն իրենց օրենքները և ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող երեխաների կամքը և նախընտրությունները հարգվեն մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով:

Հոդված 9՝ մատչելիություն

37. 12-րդ հոդվածով նախատեսված իրավունքները սերտորեն կապված են պետության այն պարտականությունների հետ, որոնք վերաբերում են մատչելիությանը (9-րդ հոդված), քանի որ օրենքի առջև հավասարության իրավունքն անհրաժեշտ է, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորություն ստեղծի անկախ ապրելու և կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք մասնակցություն ունենալու համար: 9-րդ հոդվածը պահանջում է բացահայտել և վերացնել հանրության համար բաց կամ հանրային օգտագործման կառույցների կամ ծառայությունների մատչելիության խոչընդոտները: Տեղեկատվության և հաղորդակցության մատչելիության բացակայությունը և անմատչելի ծառայությունները կարող են գործնականում խոչընդոտ հանդիսանալ հաշմանդամություն ունեցող որոշ անձանց գործունակության իրացման հարցում: Ուստի մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները գործունակության իրացման ուղղությամբ և պետք է դրան վերաբերող բոլոր տեսակի տեղեկություններն ու հաղորդակցությունը դարձնեն լիովին մատչելի: Մասնակից պետությունները պետք է վերանայեն իրենց օրենքներն ու պրակտիկաները, որպեսզի ապահովեն գործունակության ու մատչելիության իրավունքների իրացումը:

Հոդված 13՝ արդարադատության հասանելիություն

38. Մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց այլոց հետ հավասար հիմունքներով հասանելի լինի արդարադատությունը: Գործունակության իրավունքի ճանաչումը տարբեր առումներով էական նշանակություն ունի արդարադատության հասանելիության համար: Այլոց հետ հավասար հիմունքներով իրենց իրավունքների և պարտականությունների կիրարկման միջոցներ փնտրող հաշմանդամները պետք է ճանաչվեն որպես օրենքի առջև կանգնած անձինք, ովքեր դատարաններում և տրիբունալներում օժտված են իրավասուբյեկտությամբ: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան փաստաբանի կողմից ներկայացված լինելու հասանալիություն այլոց հետ հավասար հիմունքներով: Այս խնդիրը արձանագրվել է բազմաթիվ իրավահամակարգերում, ուստի այն պետք է շտկվի: Խնդրի շտկման միջոցներից է երաշխիքը, որ գործունակության իրենց իրավունքի միջամտության ենթարկված անձինք ունեն նման միջամտությունը անձամբ կամ փաստաբանական ներկայացուցչի կողմից վիճարկելու հնարավորություն: Հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ են բացառվել արդարադատական համակարգում առանցքային դեր կատարող պաշտոններից, ինչպիսիք են փաստաբանի, դատավորի, վկայի կամ երդվյալ ատենակալի պաշտոնները:

39. Ոստիկանները, սոցիալական աշխատողները և առաջին արձագանքի համակարգի այլ աշխատողներ պետք է վերապատրաստված լինեն, որպեսզի ճանաչեն հաշմանդամություն ունեցող անձանց որպես օրենքի առջև լիարժեք անձինք և նրանց գանգատներին ու պնդումներին տան նույն կշիռը, ինչ կտային ոչ հաշմանդամ

անձանց: Սա ենթադրում է այս կարևոր մասնագիտությունները կրողների վերապատրաստում և իրազեկվածության բարձրացում: Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է օժտված լինեն գործունակությամբ, որպեսզի հանդես գան որպես վկա այլոց հետ հավասար հիմունքներով: Կոնվենցիայի 12-րդ հոդվածը երաշխավորում է աջակցումը, որ անձն իրացնի իր գործունակությունը, ներառյալ իրացնի դատական, վարչական և այլ իրավական վարույթների շրջանակներում վկայություն տալու իր ունակությունը: Նման աջակցությունը կարող է տարբեր ձևերի լինել, ներառյալ՝ հաղորդակցվելու բազմազան եղանակների ճանաչումը, որոշ իրավիճակներում տեսագրված վկայության թույլատրումը, ընթացակարգային հարմարեցումները, պրոֆեսիոնալ սուրդո թարգմանության ապահովումը և աջակցող այլ մեթոդների կիրառումը: Դատական մարմինը նույնպես պետք է վերապատրաստված լինի և իրազեկվի իր պարտականության մասին՝ հարգելու հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը, ներառյալ՝ նրանց իրավական գործունակությունը և իրավասուբյեկտությունը:

Հոդվածներ 15 և 25՝ ազատություն, անվտանգություն և համաձայնություն

40. Հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության իրավունքի նկատմամբ այլոց հետ հավասար հիմունքներով ներառում է հարգանք նրանց ազատության և անվտանգության հանդեպ: Հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության մերժումը և նրանց կամքին հակառակ կամ առանց նրանց համաձայնության կամ նրանց փոխարեն որոշումներ ընդունողի համաձայնությամբ ազատությունից զրկումը հաստատություններում շարունակաբար կրկնվող խնդիր է: Այս պրակտիկան իրենից ներկայացնում է կամայական ազատազրկում, ինչը Կոնվենցիայի 12-րդ և 14-րդ հոդվածների խախտում է: Մասնակից պետությունները պետք է ձեռնպահ մնան նման պրակտիկաներից և հաստատեն այնպիսի մեխանիզմ, որով կվերանայվի հաշմանդամություն ունեցող անձանց առանց նրանց հատուկ համաձայնության շուրջօրյա խնամքի հաստատություններում տեղավորելու դեպքերը:
41. Առողջական վիճակի ամենաբարձր հնարավոր մակարդակը վայելելու իրավունքը (25-րդ հոդված) ներառում է բուժապասարկման իրավունք՝ հիմնված ազատ ու իրազեկված համաձայնության վրա: Մասնակից պետությունները պարտավոր են պահանջել բուժապասարկում իրականացնող բոլոր մասնագետներից (ներառյալ հոգեբուժության ոլորտի մասնագետներից), որ մինչև որևէ բուժում սկսելը նրանք ստանան հաշմանդամություն ունեցող անձանց ազատ իրազեկված համաձայնությունը: Այլոց հետ հավասար հիմունքներով գործունակության իրավունքի համատեքստում մասնակից պետությունները կրում են պարտավորություն՝ թույլ չտալու, որ անձի փոխարեն որոշում կայացնողները տան համաձայնություն անձի բուժման վերաբերյալ: Առողջապահական և բուժապասարկող ողջ անձնակազմը պետք է ապահովի համապատասխան խորհրդատվություն անմիջականորեն հաշմանդամություն ունեցող անձանց հետ:

Նրանք պետք է նաև հնարավորինս ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձի օգնականները կամ աջակցողները նրա փոխարեն չընդունեն որոշումներ կամ անհարկի ազդեցություն ունենան նրա որոշումների վրա:

Հոդվածներ 15, 16 և 17՝ հարգանք անձի անձեռնմխելիության և խոշտանգումից, բռնությունից, շահագործումից և վատ վերաբերմունքից զերծ լինելու իրավունքների նկատմամբ

42. Ինչպես արդեն նշվել է Կոմիտեի կողմից մի շարք եզրափակիչ դիտարկումներում, հոգեբուժական և առողջապահական ու բուժսպասարկում իրականացնող այլ հաստատությունների կողմից հարկադիր բուժումը օրենքի առջև հավասարության իրավունքի խախտում է և ոտնձգություն անձի անձեռնմխելիության իրավունքի (17-րդ հոդված), խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի (15-րդ հոդված), բռնությունից, շահագործումից և վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքների (16-րդ հոդված) նկատմամբ: Այս պրակտիկան մերժում է անձին գործունակությունը ընտրել բժշկական միջամտությունը և հետևաբար Կոնվենցիայի 12-րդ հոդվածի խախտում է: Մասնակից պետությունները, փոխարենը, պետք է հարգեն հաշմանդամություն ունեցող անձանց կողմից բոլոր պահերին որոշումներ կայացնելու գործունակությունը, ներառյալ՝ անձնային ճգնաժամի իրավիճակներում: Նրանք պետք է ապահովեն, որ ծառայությունների տարբերակների մասին անձանց տրվի ճշգրիտ և մատչելի տեղեկատվություն և որ առկա լինեն ոչ բժշկական մոտեցումներ, ինչպես նաև հասանելի լինի անկախ աջակցություն: Մասնակից պետությունները կրում են հոգեբուժական և այլ տեսակի բժշկական միջամտությունների կապակցությամբ որոշումներ կայացնելու հարցում աջակցությունն անձանց հասու դարձնելու պարտավորություն: Հարկադիր բուժումը առանձնահատուկ խնդիր է հոգեոցիալական, մտավոր և կոգնիտիվ այլ հաշմանդամություններ ունեցող անձանց համար: Մասնակից պետությունները պետք է վերացնեն այն քաղաքականությունները և օրենսդրական կարգավորումները, որոնցով թույլ է տրվում կամ չի դադարեցվում հարկադիր բուժումը, քանի որ այն շարունակվող խնդիր է աշխարհի շատ երկրների հոգեբուժությանն առնչվող օրենսդրություններում՝ չնայած նման մոտեցման անարդյունավետության մասին առկա էմպիրիկ տվյալներին և ի հեճուկս հոգեբուժական համակարգերից օգտվող մարդկանց տեսակետների՝ հարկադիր բուժման պատճառով իրենց կրած խորը ցավի ու հոգեվնասվածքի (տրավմա) մասին: Կոմիտեն հանձնարարում է, որ մասնակից պետություններն երաշխավորեն, որ անձի ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիությանը վերաբերող որոշումները հնարավոր լինի կայացնել բացառապես անձի ազատ ու իրազեկված համաձայնությամբ:

Հոդված 18՝ ազգություն

43. Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անուն կրելու և ծննդյան գրանցման իրավունք՝ իբրև ամենուր օրենքի առջև անձ լինելու իրավունքի մի մաս (18-րդ հոդված, 2-րդ պարբերություն): Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ապահովեն հաշմանդամություն ունեցող երեխաների գրանցումը ծնվելու պահին: Այս իրավունքը նախատեսված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով (7-րդ հոդված), այդուհանդերձ հաշմանդամություն ունեցող երեխաների դեպքում անհամամասնորեն մեծ է հավանականությունը, որ նրանք, ի տարբերություն մյուս երեխաների, չեն գրանցվի: Սա ոչ միայն զրկում է նրանց քաղաքացիությունից, այլև զրկում է առողջապահության ու կրթության հասանելիությունից և նույնիսկ կարող է հանգեցնել նրանց մահվան: Քանի որ նրանց գոյության մասին պաշտոնական տվյալներ չկան, ապա նրանց մահը կարող է տեղի ունենալ հարաբերական անպատժելիության համատեքստում:

Հոդված 19՝ ապրել անկախ և ներառված լինել համայնքում

44. 12-րդ հոդվածով նախատեսված իրավունքների լիարժեք իրացման համար խիստ կարևոր է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան իրենց կամքն ու նախընտրությունները զարգացնելու հնարավորություններ, որպեսզի կարողանան այլոց հետ հավասար հիմունքներով իրացնել գործունակության իրենց իրավունքը: Սա նշանակում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է այլոց հետ հավասար հիմունքներով ունենան համայնքում անկախ ապրելու և անձնական ընտրություններ կատարելու, ինչպես նաև իրենց առօրյա կյանքը վերահսկելու հնարավորություն, ինչպես նախատեսված է 19-րդ հոդվածով:
45. 12-րդ հոդվածի 3-րդ պարբերության մեկնաբանությունը համայնքում ապրելու իրավունքի (19-րդ հոդված) լույսի ներքո նշանակում է, որ գործունակության իրացման հարցում աջակցությունը պետք է տրամադրվի համայնքահեն մոտեցմամբ: Մասնակից պետությունները պետք է ընդունեն, որ համայնքները արժեքավոր ռեսուրս և գործընկերներ են գործունակությունն իրացնելու հարցում անհրաժեշտ աջակցության տեսակները բացահայտելու գործընթացում, ներառյալ՝ աջակցության տարբերակների մասին իրազեկվածությունը բարձրացնելու հարցում: Մասնակից պետությունները պետք է ընդունեն, որ սոցիալական կապերը և բնականորեն տեղի ունեցող համայնքային աջակցությունը (ընկերների, ընտանիքի, դպրոցների միջոցով) առանցքային նշանակություն ունեն աջակցությամբ կայացվող որոշումների համար: Սա համահունչ է Կոնվենցիայի այն շեշտադրման հետ, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է լիարժեք կերպով ներառվեն ու մասնակցեն համայնքի կյանքին:

46. Հաշմանդամություն ունեցող անձանց մեկուսացումը (սեգրեգացիան) հաստատություններում շարունակում է մնալ համատարած և չարիք պատճառող խնդիր, որը խախտում է Կոնվենցիայով երաշխավորվող մի շարք իրավունքներ: Խնդիրն ավելի է խորանում հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունից համատարած զրկմամբ, որը թույլ է տալիս այլ անձանց տալ համաձայնություն հաստատություններում իրենց տեղավորվելուն: Հաստատությունների տնօրեններին է որպես կանոն փոխադրվում հաստատությունում ապրող անձանց գործունակությունը: Սա անձի նկատմամբ ողջ իշխանությունն ու վերահսկողությունը դնում է հաստատության ձեռքերում: Կոնվենցիայի պահանջներին բավարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները հարգելու համար պետք է իրականացնել ապահիստիտուցիոնալացում, իսկ հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց գործունակությունը պետք է վերականգնվի, և նրանք պետք է կարողանան ընտրել՝ որտեղ և ում հետ ապրել (19-րդ հոդված): Անձի ընտրությունը՝ թե որտեղ և ում հետ ինքը ապրի, չպետք է ազդի իր գործունակության իրացման հարցում աջակցության ստանալու իրավունքի հասանելիության վրա:

Հոդված 22՝ անձնական կյանք

47. Անձի փոխարեն որոշումների կայացման ռեժիմները, բացի Կոնվենցիայի 12-րդ հոդվածի հետ անհամադրելի լինելուց, նաև ունեն հաշմանդամություն ունեցող անձանց անձնական կյանքի գաղտնիության իրավունքը խախտելու ներուժը, քանի որ անձի փոխարեն որոշումներ կայացնողները որպես կանոն ունենում են նրա մասին անձնական և այլ տեսակի տեղեկատվության շատ լայն հասանելիություն: Աջակցությամբ որոշումների կայացման համակարգեր հիմնելիս մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ գործունակության իրացման հարցում աջակցություն տրամադրողները լիովին հարգեն հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի գաղտնիության իրավունքը:

Հոդված 29՝ քաղաքական մասնակցություն

48. Գործունակությունից զրկումը կամ դրա սահմանափակումը ծառայել է հաշմանդամություն ունեցող որոշ անձանց քաղաքական մասնակցությունից, հատկապես քվեարկելու իրավունքից զրկելուն: Կյանքի բոլոր ոլորտներում գործունակության հավասար ճանաչումը լիարժեքորեն իրացնելու համար կարևոր է ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց գործունակությունը՝ մասնակցելու հանրային ու քաղաքական կյանքում (29-րդ հոդված): Սա նշանակում է, որ որոշումներ կայացնելու կարողությունը չի կարող հիմնավորում հանդիսանալ, որ հաշմանդամություն ունեցող անձինք բացառվեն քաղաքական իրավունքների

իրացման հարցերում, ներառյալ բացառվեն քվեարկություններին մասնակցելուց, ընտրովի պաշտոններում առաջադրվելուց և երդվյալ ատենակալներ դառնալուց:

49. Մասնակից պետությունները պարտավոր են պաշտպանել ու խթանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը՝ ունենալու հասանելիություն իրենց նախընտրություններին համապատասխանող աջակցության, երբ մասնակցում են գաղտնի քվեարկությունների և առանց խտրականության մասնակցելու բոլոր տեսակի ընտրություններին և հանրաքվեներին: Կոմիտեն հավելյալ հանձնարարում է, որ մասնակից պետությունները երաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը՝ առաջադրվելու ընտրություններում, արդյունավետորեն զբաղեցնելու պաշտոններ և կառավարության բոլոր մակարդակներում կատարելու հանրային բոլոր գործառույթները՝ ցանկության դեպքում գործունակության իրացման հարցում ստանալով խելամիտ հարմարեցումներ և աջակցություն:

V. Կիրառումը ներպետական մակարդակում

50. Վերը շարադրված նորմատիվային բովանդակության և պարտականությունների լույսի ներքո մասնակից պետությունները պետք է հետևյալ քայլերը ձեռնարկեն, որպեսզի ապահովեն Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածի լիակատար իրագործումը.
- (ա) Ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց որպես օրենքի առջև անձինք, ովքեր այլոց հետ հավասար հիմունքներով կյանքի բոլոր ոլորտներում օժտված են իրավասություններով և գործունակությամբ: Սա ենթադրում է անձի փոխարեն որոշումների կայացման ռեժիմների և նրանց գործունակությունից զրկող մեխանիզմների վերացում, որոնք իրենց նպատակով կամ հետևանքներով խտրական են հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Մասնակից պետություններին հանձնարարվում է ստեղծել գործունակության իրավունքը բոլորի հետ հավասար հիմունքներով պաշտպանող նորմատիվ լեզու:
 - (բ) Ստեղծել, ճանաչել ու հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի դարձնել իրենց գործունակությունն իրացնելու աջակցության լայն հնարավորություններ: Նման աջակցության երաշխիքները պետք է հիմնված լինեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, կամքի և նախընտրությունների նկատմամբ հարգանքի վրա: Աջակցությունը պետք է բավարարի վերոնշյալ 29-րդ պարբերությունում նշված չափանիշները, որոնց հիման վրա մասնակից պետությունները պետք է բավարարեն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջները:
 - (գ) Սերտորեն խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաների, նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ, ինչպես նաև ակտիվորեն ներգրավել նրանց 12-րդ

հոդվածի կատարումն ապահովող օրենսդրության, քաղաքականությունների մշակման և այլ տեսակի որոշումների կայացման և իրագործման գործընթացներում:

51. Կոմիտեն մասնակից պետություններին խրախուսում է ձեռնարկել հետազոտություններ կամ միջոցներ տրամադրել դրանց համար և մշակել հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության՝ օրենքի առջև հավասար լինելու իրավունքը հարգող և գործունակության իրացման աջակցության լավագույն պրակտիկաները:
52. Մասնակից պետություններին խրախուսվում է մշակել անձի փոխարեն որոշումների կայացման ֆորմալ և ոչ ֆորմալ պրակտիկաների դեմ պայքարող արդյունավետ մեխանիզմներ: Այս նպատակին հասնելու համար Կոմիտեն մասնակից պետություններին հորդորում է ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան իրենց կյանքում իմաստալից ընտրություններ կատարելու և իրենց անհատականությունը զարգացնելու, իրենց գործունակությունն իրացնելու հարցում աջակցություն ստանալու հնարավորություններ: Սա ներառում է հետևյալը, սակայն չի սահմանափակվում դրանով. սոցիալական կապեր ստեղծելու հնարավորություններ, այլոց հետ հավասար հիմունքներով աշխատելու և ապրուստ վաստակելու հնարավորություններ, համայնքում բնակվելու տեղի բազմազան տարբերակներ և ներառում կրթական բոլոր մակարդակներում:

[1] Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականություն բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, Հոդված 13 (բ):

[2] Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, 2-րդ հոդված՝ համակցությամբ 5-րդ հոդվածի հետ: